



Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն Ե Վ Թ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

Կ Ե Ն Ս Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Միտելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն

1) **Բուսական ո՞ր հյուսվածքի բջիջներին է բնորոշ արագ կիսվելը:**

- 1) գոյացնող
- 2) հիմնական
- 3) փոխադրող
- 4) մեխանիկական

2) **Ի՞նչն է կազմված սպիից, առնակից, սերմնարանից:**

- 1) վարսանդը
- 2) առէջը
- 3) ծաղկապատը
- 4) սերմնաբողբոջը

3) **Ո՞ր բակտերիաներն են սինթեզում իրենց անհրաժեշտ օրգանական միացություններ՝ օգտագործելով շրջապատող միջավայրի անօրգանական միացությունները:**

- 1) մակաբույծները
- 2) հետերոտրոֆները
- 3) սապրոտրոֆները
- 4) ավտոտրոֆները

4) **Ո՞ր օրգանիզմն է համարվում մակաբույծի միջակա (միջանկյալ) տեր:**

- 1) այն օրգանիզմը, որում կատարվում է մակաբույծի սեռական բազմացումը
- 2) այն օրգանիզմը, որտեղ ապրում է մակաբույծի սեռահասուն ձևը
- 3) այն օրգանիզմը, որտեղ ընթանում է մակաբույծի զարգացման թրթուրային փուլը
- 4) այն օրգանիզմը, որում կատարվում է մակաբույծի թե՛ անսեռ, թե՛ սեռական բազմացումը

5) **Ո՞ր որդն է պատկանում օղակավոր որդերի տիպին:**

- 1) սպիտակ պլանարիան
- 2) մարդու ասկարիդը
- 3) անձրևորդը
- 4) սրատուտը

6) **Ինչո՞վ կամ ինչերո՞վ է շնչում մողեսը:**

- 1) տրախեաներով
- 2) խռիկներով
- 3) թոքերով
- 4) մաշկով

7) **Ո՞ր կենդանին է տաքարյուն:**

- 1) ձուկը
- 2) գորտը
- 3) մողեսը
- 4) դելֆինը

8 **Ի՞նչն է բնորոշ ոչ պայմանական ռեֆլեքսներին:**

- 1) ժառանգվում են ծնողներից
- 2) չեն փոխանցվում
- 3) առաջանում են կյանքի ընթացքում
- 4) ժամանակավոր են

9 **Ի՞նչ հիվանդություն է առաջանում մարդու օրգանիզմում C վիտամինի անբավարարությունից:**

- 1) ցինգա
- 2) ռախիտ
- 3) բերի-բերի
- 4) հավկուրություն

10 **Մրտի ռ՞ր խոռոչից է սկիզբ առնում մարդու աորտան:**

- 1) ձախ փորոքից
- 2) աջ փորոքից
- 3) ձախ նախասրտից
- 4) աջ նախասրտից

11 **Ակնագնդի ռ՞ր թաղանթում է գտնվում մարդու աչքի գույնը պայմանավորող գունանյութը:**

- 1) սպիտակուցաթաղանթում
- 2) եղջերաթաղանթում
- 3) ցանցաթաղանթում
- 4) ծիածանաթաղանթում

12 **Մարդու մարտդակա՛ն համակարգի ռ՞ր բաժնում է կատարվում մարսված նյութերի հիմնական զանգվածի ներծծումը:**

- 1) բերանի խոռոչում
- 2) ուղիղ աղիում
- 3) ստամոքսում
- 4) բարակ աղիներում

13 **Գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի ռ՞ր բլթում է գտնվում լսողական գոտին:**

- 1) ծոծրակային
- 2) քունքային
- 3) ճակատային
- 4) գագաթային

14 **Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում ներշնչման ժամանակ:**

- 1) միջկողային մկանների կծկում
- 2) կողոսկրերի իջեցում
- 3) ստոծանու մկանների թուլացում
- 4) կրծքավանդակի խոռոչի փոքրացում

15 Ո՞ր շարքում են բերված խառը գեղձերը:

- 1) ենթաստամոքսային գեղձ, սեռական գեղձ
- 2) վահանաձև գեղձ, արցունքագեղձ
- 3) ուրցագեղձ, մակերիկամ
- 4) թքագեղձ, քրտնագեղձ

16 Ի՞նչ է տեղի ունենում մարդու մաշկում միջավայրի ջերմաստիճանի նվազման դեպքում:

- 1) մազանոթների լուսածերպերը լայնանում են
- 2) նվազում է ջերմատվությունը
- 3) մեծանում է մղվող արյան քանակը
- 4) արագանում է արյան հոսքը դեպի մարմնի մակերես

17 Որո՞նք են սպիտակուցների մոնոմերները:

- 1) ստերոիդները
- 2) ամինաթթուները
- 3) մոնոսախարիդները
- 4) նուկլեինաթթուները

18 Որտե՞ղ է տեղի ունենում ի-ՌՆԹ-ի սինթեզը էուկարիոտների մոտ:

- 1) բջջակորիզում
- 2) ցիտոպլազմայում
- 3) ռիբոսոմներում
- 4) Գոլջիի համալիրում

19 Էուկարիոտիկ բջջում ո՞ր օրգանոիդի հիմնական ֆունկցիան է ԱԵՖ-ի մոլեկուլի սինթեզը:

- 1) միտոքոնդրիումի
- 2) բջջակորիզի
- 3) ռիբոսոմի
- 4) բջջային կենտրոնի

20 Ի՞նչն է սահմանազատում բջջի պարունակությունը միջբջջային նյութից, մասնակցում նյութերի բջջից դուրս և դեպի բջջի փոխադրմանը:

- 1) կորիզը
- 2) միտոքոնդրիումը
- 3) բջջաթաղանթը
- 4) ռիբոսոմը

21 Ի՞նչ հավանականությամբ հեմոֆիլիկ հոր և նորմալ արյան մակարդեղիությամբ հոմոզիգոտ մոր տղան կկրի հեմոֆիլիան պայմանավորող գենը, եթե հեմոֆիլիան X ժրոմոսոմին շղթայակցված ռեցեսիվ հատկանիշ է:

- 1) 0%
- 2) 25%
- 3) 50%
- 4) 100%

22

Գ.Մենդելը ինչպե՞ս անվանեց այն հատկանիշը, որը դրսևորվում էր հիբրիդային առաջին սերնդում և «քողարկում էր» հակադիր հատկանիշի դրսևորումը:

- 1) ալելային
- 2) ռեցեսիվ
- 3) դոմինանտ
- 4) շրթայակցված

23

Բերված էկոլոգիական գործոններից ո՞րն է կենսածին:

- 1) խոնավությունը
- 2) տիեզերական ճառագայթները
- 3) մակաբուծությունը
- 4) հողի աղայնությունը

24

Ո՞ր բակտերիաների կենսագործունեության արդյունքում են ազոտի միացությունները վերածվում մթնոլորտային ազոտի և վերադառնում մթնոլորտ:

- 1) ազոտ ֆիքսող
- 2) դենիտրիֆիկացնող
- 3) ամոնիֆիկացնող
- 4) նիտրիֆիկացնող

25

Ի՞նչն է պաշտպանում ստամոքսի պատը ստամոքսահյութի քայքայիչ ազդեցությունից (ինքնամաքումից):

Պատասխան՝ _____

26

Մարդու օրգանիզմում մեկ օրվա ընթացքում որքա՞ն երկրորդային մեզ է առաջանում:

Պատասխան՝ _____

27

Իմունիտետի ո՞ր տեսակն է փոխանցվում ժառանգաբար:

Պատասխան՝ _____

28 Գանգի դիմային բաժնի ո՞ր ոսկորն է շարժուն:

Պատասխան՝ _____

29 Ինչպե՞ս է կոչվում արական և իգական սեռական բջիջների միմյանց միանալու գործընթացը:

Պատասխան՝ _____

30 Սաղմնային ո՞ր թերթիկից է առաջանում նյարդային համակարգը:

Պատասխան՝ _____

31 Ինչե՞րն են հանդիսանում գենետիկական նյութի հանկարծակի, թռիչքաձև դրսևորվող փոփոխություններ, որոնք կենդանի օրգանիզմներին տալիս են որակապես նոր հատկանիշներ և հատկություններ:

Պատասխան՝ _____

32 Սեռական բջիջների զարգացման ո՞ր փուլում է տեղի ունենում մեյոզը:

Պատասխան՝ _____

33 Որոքները գաղութի ավելցուկային քանակի դեպքում ոչնչացնում են իրենց ձագերի մի մասին: Սա գոյության կռվի ո՞ր ձևն է:

Պատասխան՝ _____

34 Ո՞ր գիտությունն է ուսումնասիրում կենդանիների նոր ցեղատեսակների, բույսերի նոր սորտերի և միկրոօրգանիզմների նոր շտամների կենսաբանական հիմունքները և ստացման մեթոդները, ինչպես նաև արդեն գոյություն ունեցող ցեղատեսակների, սորտերի և շտամների բարելավման ուղիները:

Պատասխան՝ _____

35 Ո՞ր կենդանիներն են համարվում կաթնասունների նախնիները:

Պատասխան՝ _____

36 Բնութագրեք մակարածությունը: Բերեք 1 օրինակ:

Օրինակ՝ _____

37 Բնութագրեք էվոլյուցիայի երեք գլխավոր ուղղությունները, որոնք տանում են կենսաբանական առաջադիմության:

1. արոմորֆոզ _____

2. իդիոադապտացիա _____

3. ընդհանուր դեգեներացիա _____

Պատասխանների ձևաթուղթ Կենսաբանություն

Եղևք ուշադիր

*Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելու համար ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրեք X նշանը (միևնույն սյունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
Պատասխանի համարը	1	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	1
	2	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	2
	3	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	3
	4	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	4

	21	22	23	24
Պատասխանի համարը	1	☐	☐	☐
	2	☐	☐	☐
	3	☐	☐	☐
	4	☐	☐	☐

	Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը
1	☐
2	☐
3	☐
4	☐

Փոխված պատասխանների քանակը

Կարճ պատասխանով առաջադրանքներ

Ստացադրանքի համարը	25		31	
	26		32	
	27		33	
	28		34	
	29		35	
	30			

Լրացնում է ստուգողը

Ընդարձակ պատասխանով առաջադրանքների միավորները

36	37
1 ☐	1 ☐
2 ☐	2 ☐
	3 ☐

Հանձնաժողովի անդամներ՝

-
-

Հանձնաժողովի նախագահ՝

.....

Միավորների գումարը	
Գնահատականը	

